


ՏԻՐ ԵՒ ՏԵՕՐԻՆ

Ե. ԲՈՒՐՈՍՅԱՆ

Կամակ համ որ եւ է
գրեթէ կենդանի է ուղղել աւ
Նոյնն. ԱՅՇԱ. ՈՅՍ րազրի
ՔԱՂԻՆ (Գրիկոս)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՒԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դակնիկ	60
Վեջամետայ	» 35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴԵՐ	
Տարեկան Ձրակի	20
Վեջամետայ	» 12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆՆԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնարարութեան վրայ է:

Խնարարութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHELOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԻՄՔԱՍԳՐԱԿԱՆ ԱՋԳ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժնա-
նորդներէն ջերմասկէ կը խնդրուի որ բա-
ւ. ինքնին նախորդ տարիէն մնացեալ պար-
տաց կցեղով որից նախ իրենց ԵՐԿՐՈՐԴ
Տարեկանի բաժնաւորագրից, եւ հասկ
չ'ը քորոյ մասնաւոր դիմումներու, որոնք
նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ.
ՈՅՍԻ արդէն բազմազան Տնօրինութեան:

ԹԵՐԵՔԵՆԵՐՈՒՆ
ՎԻՃԱԿԸ

Մեր տեղական և աւելի արտասահ-
մանեան ընթերցողները քերտի բառը մեր
թերթին ճակատը գրուած տեսնելով պիտի
զարմանան անպատճառ և պիտի սկսին մը-
տածել թէ՛ Առաջնորդարանի հակառակ
թերթը, — անոնց գործածած բացատրու-
թեամբ — շատերուն անհասկնալի այս բառը
նիւթ ընտրելով, հանրութեան օգուտը չօ-
չափող խնդրով մը պիտի զբաղի:

Այդպէս մտածողները արդարեւ չպիտի
սխալին. է՛ն կարեւոր նիւթն է այս, և
մեր ազգայնոց շատերը, որ օրերու հոլով-
մանց, հետ ընկալանաբար միշտ դէպի ծե-
րութիւն ու անկէ յետոյ դէպի գերեզման
կը յառաջանան, պէտք ունին որոշապէս
գիտնալ թէ՛ իրենց մահուանէն վերջ ի՞նչ
վիճակներու պիտի մատնուի այն հարստու-
թիւնը և այն ամեն գոյքերը՝ զորս այնչափ
ճիգերով ու այնչափ ճակատի քրտինք ըս-
պառելով գիշեր կը ջանան:

Երբ գաւառներու մէջ կը գտնուէինք,
յոճախ առիթը ունեցած ենք, ծերերու և
շատ անգամ երիտասարդներու բերնէն ալ
լսել. «Մեռնողին մայն ալ իր հետը կը
մեռնի»:

Գաւառներու և նոյն իսկ Թուրքիոյ
Կեդրոնին համար այս բացատրութիւնը շատ
նպատակայարմար և ստոյգ էր: Երբ մէկը
կը մեռնէր հոն, և անչափահաս ժառանգ-
գորդներ կ'ունենար, անոնց ներկայ ու ապա-
գայ իրաւունքները ապահովելու գործը,
տեղւոյն կառավարութեան իրաւասութեանը
կը պատկանէր:

Եթէ մէկը կրնայ իւր աչքին առջև
պատկերացնել անկանոն կառավարութիւն
մը և կաշառակեր պաշտօնեաներ, այն ա-
տեն դիւրին կ'ըլլայ հետեւեցնել ի՞նչ մեր հա-
ւերն ու մեծերը, միայն փորձառութեան վրայ

հիմնուած կը գործածեն այդ ստոյգ բա-
ցատրութիւնը. «Մեռնողին մայն ալ իրեն
հետ կը մեռնի...»:

Մեր արդի բնական ազատ միջավայ-
րին — երկարական սոսաններուն և նոյն
իսկ արուարձաններուն մէջ սակայն — այս գոր-
ծը միևնոյն խոլովակներուն մէջէն չ'անց-
նիր, ինչպէս որ տեղի կ'ունենայ Թուրքիոյ
բոլոր գաւառներուն մէջ:

Այստեղ Առաջնորդարաններն են, ու
րոնց իրաւասութեան յանձնուած է հան-
գուցեալի մը անչափահասներուն ապագան
և ինչքը ապահովութեան տակ առնելու
փափուկ... գործը:

Երբ մէկը կը մեռնի, լուր կը տրուի
իրեն պատկանած Առաջնորդարանին. ա-
ստիք կ'երթան հանգուցելոյն տունը կը
կնքեն, գրի կ'առնեն և ի հարկին շար-
ժական գոյքերը Առաջնորդարան կը փո-
խադրեն, ապագայ... ապահովութեան հա-
մար:

Առաջնորդարաններու ձեռքին տակ
գտնուած ո՛րէ՛ հանգուցեալի մը շարժական
և անշարժ կալուածներուն, առ հասարակ
քերտի անունը կուտան հոս. ահաւասիկ
խորագրիս գործածական նշանակութիւնը:

Հիմա քննենք թէ Առաջնորդարանե-
րը կամ մասնաւորապէս մեր Առաջնորդա-
րանը՝ ինչպէս ի գործ կը դնէ իրեն վրայ
յանձնուած այս նուիրական պարտականու-
թիւնը:

Երկարատեւակ Հայերէն շատերը, ըլ-
լան բնիկ, ըլլան պանդուխտ, երբ ըն-
տանիք չունին և կը հիւանդանան, խնա-
մածու ձեռքերու կարօտ զգալով ինքզինք-
նին, հիւանդանոց կը փոխադրուին (1):
Կան որ այդ տեղ իրենց պարտքը կը վճա-
րեն... մեռնելով. այսպիսիներուն քա-
հանան Տէր Սահակն է, իրեն եղած բարձ-
րագոյն հրամանի մը վրայ անձայն անըջակ
կ'երթայ Բրուսիական կամ Ֆրանսական և
կամ Տեղական հիւանդանոցէն Մարմինա
կը փոխադրէ ննջեցեալը: Voilà tous!

Անդին ուրիշ օր մը երբ պատահար
Պէնի-Մուրէն հանգուցիկ, պիտի տեսնէք ե-
կեղեցւոյ և առաջնորդարանի պաշտօնէից
մէջ իրարանցում մը, ետսսխաձիկն — մանա-

(1) Հայերունը չ'հասկցուի, որովհետեւ
Հայերը դեռ հիւանդանոց չունին. միայն
վերջերս կ'ըլլան թէ՛ Գեր. Առաջնորդը
վարժարանի շէնքին հետ, այդպիսի կարե-
ւոր հաստատութիւն մ'ալ հիմնելու վրայ
կը մտածէ եղեր:

ւանչ հինը — հպարտ ձեւով մը, առաջնոր-
դական առան ձեռքը կեցած է և Պօնա-
բարթեան հրամաններ կ'արձակէ այս ու այն
կողմ. Տէր Մամբրէն առաջնորդարանի սան-
դուխտ վրայ կանգնած է պարսպ տեղը մեր-
միցուցած մորուքը կը շոյէ անհամբերու-
թեամբ մը, շատ կարելի է կը կասկածի ալ
որ եթէ քիչ մը ուշ հաննի, այս ննջեցեալն
ալ կ'երթայ Տէր Սահակը կը թաղէ...:

Ինչ որ է նիւթէն չ'չեղինք. Պէնի-Մու-
րէնի այցելուն գործը կուսկեց արդէն.
Հանգուցեալը քիչ շատ կարողութեան տէր
մէկն է ըսել է՝ որ քիչ յետոյ հոգին պիտի
յանձնուի:

Կարգը կուգայ քերտի ինչ: Շատ ան-
գամ օր մը երկուք կ'անցնի, ավանուրբ
հանգարտութիւնը կը տիրէ: Հանգուցելոյն
տան կամ խանութին մէջէն անպատճառ փո-
խադրութիւններ տեղի կ'ունենան: Հազուա-
րեմն առաջնորդարանը գրագէտ մը ուրիշ
մէկու մը հետ խառնելով կը զրկէ հանգու-
ցելոյն ստացուածքը գրի առնելու, կնքե-
լու, առաջնորդարան փոխադրելու և կամ
ուէ կերպով ապահովելու...:

Պատահած է նոյն իսկ որ առաջնորդա-
րան փոխադրուած գոյքերու մէջէն շատերը
յարդարին ալ առած են առանց վերջին դա-
տաստանին սպասելու և դիտէք ինչպէս.
քերտի պարտականող գուռները քրիստոսի
գերեզմանին պէս կնքուած ըլլալով հան-
գերձ...:

Ուրիշ օր մ'ալ, Բարեգործական Բն-
կերութեան սրճարանը կախուած կը տես-
նուի Պաշտօնական (? ? ?) յայտարարութիւն
մը, որով կը ծանուցուի այն ինչ հանգու-
ցեալին քերտի անձայն օրը, ժամը չեմ
գիտեր քանիին վաճառուիլը որոշուած ըլ-
լալը. այսպէսով կը փակուի... ավան
ինչ. Առաջնորդարանի կողմէն տեղի ունե-
ցած... թերութիւնները կը կորուսին ան-
գունդին մէջ...:

Եթէ ծածկելու բան մը չունին, այդ
պարտները, ինչո՞ւ թերթերու գոյութե-
նէն ի վեր տեղի ունեցած 20է աւելի քե-
րտիներու վաճառումը ծանուցանող Պաշ-
տօնական յայտարարութիւնը չ'զրկեցին
թերթերուն, որ այն ատեն ստուգիւ պաշ-
տօնական հանգամանք ունենային ատոնք:

Իրաւ է: «Առաջալոյս»-ն չեն զրկեր.
հոգ չէ՛. մենք չենք դահանջեր. բայց չէ՞
որ Առաջնորդարանի պարտն զրգալը իրեն
յատուկ օրկան թերթը ունեցաւ «Նոր-Օր»
անունով... հոն ինչու չ'զրկեցին պաշտօնա-
կան յայտարարութիւնները և մինչև ցարդ
ամեն ինչ զարձեալ մթնոնտ եղաւ...:

Ահա քերէֆէնեբուն վիճակը : Գեր . առաջնորդը բնականաբար այս բաներուն վերայ կը մտածէ լուրջ կերպով . մենք այս անցողակի ակնարկը ուղղելով քերէֆէնեբուն վրայ , անցնինք ըստ մեր խօստման ուրիշ ասանց մօտեցող զեղծումներու վրայ խօսելու :

ՎԻՊԹՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ

1819-1901

Ալէքսանտրին-Վիպթորիա Ա . Անգղիոյ Թագուհին Լոնտոն ծնած է 1819 մայիս 24 ին . Բէնթի դուքս Եղուարդի եւ Սաքս Գոպուրիի Դուքս Վիպթորիայ իշխանուհիին աղջիկն է : Իր հօրը մահուամբ որուն միակ դուստին էր դահածառանգը եղաւ Անգղիոյ գահին :

Նորթոն մայրամասի Գրաուէին եղաւ երկտասարդ իշխանուհիին դաստիարակուէին որմէ բնական գիտութիւններէ եւ պատմութիւնէ զատ զուարճութեան համար զանազան արուեստներ ալ սորվեցաւ :

Երբոր երկտասարդ աղջիկ էր կիցիով կրդ . զայն Լորտ Մէլլուրնի խնամոցը յանձնեց , որպէսզի անոր սորվեցնէ անգլիական սահմանադրութեան կազմուածքը (mecanisme) եւ այս ազատական նախարարը մեծ ազդեցութիւն ունեցաւ երկտասարդ իշխանուհիին վրայ :

1837 Յունիս 20 ին Վիպթորիայ իր հօրեղբորը յաջորդեց եւ Յունիսի 28 ին Վէսթմինսթըրի մէջ հանդիսաւորապէս թագադրուեցաւ : Նոյեմբերի 20 ին խորհրդարանը բանալով երկտասարդ թագուհին Whig (ազատական) նախարարութիւնը պաշտօնին մէջ պահեց , որուն նախագահն էր Մէլլուրնի եւ զիտաւորութիւնը սեղանի վրայ բացմանը ժամանակ երկիրը ազատական գաղափարներով կառավարելու :

Հազիւ Գահին վրայ բազմած , երկտասարդ թագուհին եւրոպայի ամեն կողմէն թեկնածուներու լեզէն մը ընդունեց որոնք Անգլիոյ վարդին ձեռքը կը խնդրէին -- այսպէս կ'անուանէր Վիպթորիան Բրիտանական կնամեծարութիւնը : Պահ մը տարակուսեցաւ թէ ընտրութիւնը պիտի իյնար Օրլէանի ընտանիքէն Նեմուրի դուքսին եւ կամ իր ազգական Ալպէր որ Սաքս Գոպուր իշխանին վրայ . բայց սակայն թագուհին այս վերջինը ընտրեց որուն համար արգէն կ'ըսէին թէ ամենամեծ սէրը կը տածէր եւ 1840 փետր . 10 ին ամուսնացաւ անոր հետ :

Ալպէր իշխանը ճիշտ թագուհիին սարիքը ունէր Սաքս Գոպուր կօթաի իշխան Էրնէսթ Բ .

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՃԻՒՆ ՓԼԱՐՔԻ (4)

ՍԻԿԱՐԷԹԸ

(Շարժ . նախորդ քիւռն)

Պատերազմի սկզբնաւորութեան տունն հրացանի առաջին հարուածները Արազուիլը զարմացուցին . երկրորդները իրեն աւելի մեծ հաճոյք պատճառեցին . քանի որ կը կոտէին , Մուքարրական հարկաւ դուքս պիտի ելլար եւ իր զինուորները կրակի պիտի առաջնորդէր . եթէ ժողովն այն ատենները Մուքարրական թուղ սուղար , ամեն բան լմնցած կ'ըլլար : Դանակը ճիշտ ու ճիշտ սիրտը պիտի մեկըր եւ այս անգամ նենգութեամբ զարտնակալ ըլլալով սպաննած չ'պիտի ըլլար , հապա ճիշտ պատերազմի միջոցին

Ո՛հ , եթէ Մուքարրական արիւնը հարստութիւն մը կ'արժէր , Հայր Շէկարէյ իր երկու հազար ճուրն պիտի ունենար եւ աւելի գէշ Քարթանաներուն համար

Այդ գիշերը երկուստեք կատաղաբար կը ռուեցան . կարբիտի զինուորները կատաղած , սուրնով պատնէշներուն վրայ կը յարձակէին եւ Քարթանաներու կը բաղխէին , զոտնք յանկար-

գուքսին եղբայրն էր . եւ զանազան աստիճանաւորութեան մէջ թագուհին շատ վար աստիճանի մը մէջ ըլլալուն Անգղիոյ Թագուհին իր ամուսնոյն ընտրութեամբ ո՛ր եւ է արտաքին ազդեցութիւն մը չէր կրէր : Անգղիոյ Թագուհին , թագուհի ըլլալու , երջանիկ ըլլալու , զուակներ ունենալու եւ անգլիոյ ընտանեկան առաքնութեանց օրինակ ստալու համար ամուսնացաւ :

Դանի մը ամիս կտքը 1840 սեպտ . 3 ին խորհրդարանին մէջ ոչ-վստանութեան քուէին վերայ (Whig) նախարարութեան սեղը որ միշտ կը պաշտպանէր եւ որուն հրատարակումը 1839 ին ընդունած չէր , Toxy (պահպանողական) նախարարութիւն մը հաստատեց որ 1841 էն մինչեւ 1846 պաշտօնի վրայ կեցաւ :

Այս վարկիւնէն սկսեալ թագուհին գոհացաւ միայն թագաւորելով , ձգելով որ իրեն տեղը խորհրդարանը կառավարէ երկիրը , ինք միայն կը թաւականանար պաշտօնի կոչելով մեծամասնութիւն ներկայացնող մարդիկը :

Անգղիոյ Թագուհին 1842 ին էՕ երթալով Ֆրանսո-Անգլիական համաձայնութեանը պատճառ եղաւ , որու յաջորդեց մտերիմ եւ շարունակական թղթակցութիւն մը թագուհիին եւ Ֆրանսայի թագաւոր Լուի Ֆիլիքի միջեւ :

1846 մայիս 16 ին իր մայրը կորսնցուց եւ Դեկ . 14 ին անուան ցաւը ունեցաւ Ալպէր իշխանը կորսնցնելու . անիկայ որ կիցի ըսածին պէս « իր առջին հապաղքը , առաջին խորհրդակցումը , մտերիմ եւ միակ գրագիրը , եւ իր ամեն խորհրդակցութեանց անաղմուկ ընկերը եւ զած էր , ճարպիկ զայն լուսաւորելու եւ առաջնորդելու ու անոր օգնելու իր նախարարներուն հետ ունեցած յարաբերութեանց մէջ առանց նեղելու եւ նսեմացնելու նախարարութիւնը » : Թագուհիին սուգը եւ վիշաք այնչափ խոր եղաւ որ շատ մը տարիներ անմխիթար մնաց եւ հոս ասարակութեան չ'երեցաւ :

(Շարունակելի)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 22 Յունուար . - Հոս ապաստանող երկտասարդ-Թիւրքերը մեծ ճիգեր կ'ընեն դալ գարնան Պէրի մէջ գուճարում մը կազմակերպելու , որուն մէջ ներկայ գտնուին իրենց հայրենիքէն վտարանդի ըսւլոր երկտասարդ Թուրքերը . այս համաժողովին նախագահը Գէմալ պէյ պիտի ըլլայ :

Ճակիի բերել կարծելով . մինչդեռ անոնք կազմուեցան պատրաստ իրենց կ'սպասէին : Գիշերուան մթութեան մէջ զերար կը փողոտէին , սուրբը կը ընթերցէր կը ծակէին , Ռէվոլյուցիոնները ընդհանր կը պայթեցնէին եւ այս ամենը տեղի կուսնանային առանց զիրար տեսնելու եւ ճանչնալու :

Ամենէն մեծ դժբաղդութիւնը այն էր որ Սպանիացիին իւր արիւնսակից Սպանիացիները կ'սպաննէր : Այս կռիւը շատ երկար տեւեց . արշալոյսը բացուելու ատեն , կատաղարական բանակը նահանջի մէջ էր . խեղճ զօրքերը անգամ մըն ալ մինչեւ հոն գալու համար այնչափ մարդիկ կորսնցուցած էին . անօդու յարձակում . արիւնի գիշեր մը , որ ուրիշ քաղաքում մ'ալ կ'ուսելցնէր միւսներուն վրայ , անդին ծեր կարբիտոն գարձաւ պիտի լար կատաղութիւնէն . մինչդեռ ասդին Քարթանաները բոլոր գիշերը գիւցազնաբար կուտէլէ վերջ , արշալոյսը կ'ողջունէին ուրիշութեան աղաղակներ բառնալով . Harri ! Harri !

Բայց յանկարծ ուրախութեան աղաղակները եւ ամէն բան գաղթեցաւ . մէջերնին սեռու խորին տխրութիւն մը տիրեց . Մուքարրական , անյողթիլի Մուքարրական սրունքէն վերաւորեալ կը բերէին . « Ոսկորը կոտրած է » կը շնչէին բանակին մէջ . Ամբողջ գիշերը ամէն տեղ կը լարէր , անոր ձայնը ամէն կողմ

Լահէյ 22 Յունուար . - Նախագահ Գրիւկէրի վիճակը լաւացած է :

Լոնտոն 21 Յունուար . - Այն Տը Ուէթը , որ վերջերս Պօթայի խուճիւնի միացաւ , Մեծ Տը Ուէթին հոմանիշ զօրավար մըն է . Գրիւկիսի մըն Տը Ուէթ միշտ Օրանսի մէջ կը գտնուի :

Քէրթաուն 21 Յունուար . - Քրիցինկէրի դամանածն Վիլլիօրի վրայ յարձակած , բայց ետ մղուած է . ապա Քրիզնաի վրայ ուղղուած է որ ծովեզերքէն 80 մղոն հեռու է :

Շան-Հոյ-Քուան 22 Յունուար . - Տար կռիւ մը տեղի ունեցած է միջազգային զօրքերու եւ Չինացի աւազակներու միջեւ , որոնցմէ 7 հատը սպաննուած են : Ժողովուրդը Լանսըրընքէն երկու հօգի եւ 5 ճարնցի սպաննուած են , օգնութեանց հասնելէն առաջ :

Միլան 22 Յունուար . - Մեծահոշակ նուագահիւս Վէրուի , արիւնխաւնութենէ զարնուած է :

Կ . Պոլիս 21 Յունուար . - Կը ծանուցանեն թէ Եէմէնի Օսմանեան զօրքերը ապստամբած են . կառավարիչը փութով օգնազօրքեր խնդրած է , կառավարութիւնը հրամայած է 10000 կանոնաւոր զօրքերու փութանակի առաքումը :

Լոնտոն 23 Յունուար . - Կալէսի իշխանը երուարդ էրդ . անուամբ Անգղիոյ թագաւոր եւ Հնդկաստանի Կայսր հռչակուած է :

Միլան 23 Յունուար . - Վերուի վիճակը չարագանց ծանր է :

Գէշ վախճան մը մօտալուրտ է :

ՏՕՔԹ . ՔՕՐՆՖԷԼՏ

ՎԿԱՅԵԱԼ ՎԻԵՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ

Նախկին ներքին Բօխիչ Վիէնայի գըլխաւոր հիւանդանոցներուն : Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց , Գաղղիական սխտի , կոկորդի , քիթի եւ բերնի հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 էն 12 , իսկ կէս օրէ վերջը ժամը 3 էն 5 , իր առնը Շէրիֆ փաշա փողոց , ԱՂԵՒՍԱՆԻՐԻԱ :

Լուրտ էր . այն ձայնը որ կը կրկնէր « Օ՛ն , դիմաքրնք աղաքս , քաղութիւն » . իր քնացած փրփլած տանը առջին էր . Մատրիտի բանակին գերիները -- Գարթուսեանները շատ գերի բռնած էին այն իրիկունը -- նշմարեցին այդ շքեղ , փառաւոր երկտասարդը , իր ճերմակ պէտէթին պէս սօճոյն , սեւ երկայն մօրուքով եւ իր սպաններէն շրջապատուած : Մուքարրական ալ ոտքի վրայ չէր կրնար կենալ . անութիւնները կը բռնէին զինքը . զինուորներէն մէկ քանին նստարան մը բերին եւ սրունքը երկարացուցած վրան նստեցուցին :

Արագուիլ կը դիտէր Կարբիտի զինուորներուն հետ գերի բռնուած էր ու զայն գերիներու խուճիւնի մէջ դրած էին , որոնց վրայ կը հսկէին Քարթուսեան պահակներ , հրացաններ լեցուն ու պատրաստ :

Արագուիլի դանակը , համբաւաւոր դանակը իրեն օգտակարութիւն մը ունեցած չէր : տեսնելով որ գերի կը բռնուէր . փախուստին մէջ քաջքուած , գերիներու հետ պաշարուած , դաշոյնը նետած էր « սուրիշ անգամ » ըսելով . եւ հիմա հաւանականաբար հրացանի բռնուելու վիճակուած էր . որովհետեւ գերիներուն մէջ միայն ինքն էր որ համազգեստ չէր կրնար . « Լմնցած եմ . խերս անիծուած է -- կ'ըսէր -- Բէրան կամ ուրիշը մը հետ պիտի ամուսնանայ եւ կամ աղ-

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳՂՈՅ ԹՊԱԳՆԵՐԻՆ մահուան առթիւ Ազեքսանդրիոյ եկեղեցւոյն քալ ողիչ Արժ. Վահրամ Վ. Աշտիկեան, ընկերակցութեամբ Առաջնորդարանի քարտուղար Պ. Լեւոն Մկրտիչեանի, ցաւակցական այցելութիւն տուած է Անգղիոյ Հիւպատոս Պ. Կուլտի յանուն տեղւոյն Հայ Հասարակութեան:

ԳՈՀՈՒԹԵԱՄԻ կ'իմանանք թէ՛ Ազեք. սանդրիոյ ծանօթ վաճառական Տիար Զարեհ Սըվազը յանձն առած է քառասուն ոսկոյ արծաթեթեամբ դաշնակ մը նուերել Աղլիանց Ազգ. Վարժարանին:

ԱՂԵՔՍԱՆԻՐԻՈՅ ԹԱՂ. Խորհուրդը ի պաշտօն կոչած է Օրիորդ Տը Պարսըլէյ, Թրանսսի առաջնակարգ ուսուցչուհի մը, որ պիտի ստանձնէ մանչ և աղլիկ տղայոց Թրանսերէնի, երգի և դաշնակի դասերը:

Օրիորդ Տը Պարսըլէյ իր դասախօսութիւնները պիտի սկսի յառաջիկայ Փետրվար ամսէն:

Կ'իմանանք թէ թաղ. Խորհուրդը մանչերու նախակրթարանին համար ալ Անգլիացի հսկող մը պիտի բերէ, որ միևնոյն տանն ստանձնէ մարմնամարզի դասերը:

ԳԵՂԵՅԻԿ ԺԱՌԱՆԵՐԻՈՒԹԻՒՆ ՄԸ. Սիֆորթի Հայկանտրոններուն Յրգ. վաշտէն սպայ մը, տեղակալ Մարքիլ Բրիլլոն, որ այժմ Գահիրէ կը գտնուի, 150 միլիոն ֆրանքի ժառանգութիւն մը ընդունել է:

ՀԻՆԴՈՒՍԹԻ առաւօտ Մէնչիէյի միջնաբերդէն թնդանօթի միահողոյն հարուածները ողջունեցին Անգլիոյ Եղուարդ թագաւորին գահակալութիւնը:

ՆՈՅՆ ՕՐԸ Գահիրէ հասած է Թրանսսի գրագէտ Պ. Անթոլ Թրանս, որուն Հայանպատ գրուածները արդէն ամենուն ծանօթ են: Պ. Անթոլ Թրանս, Ակադէմիոյ անդամ է և շատ մը հիանալի վէպեր գրած է, և Այժմ աշխատակից է Pro Armenia ին:

ԳՍՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Պատ. Գործ. Ժողովն, կը ծանուցանէ մեզ թէ՛ Գաւառ. Վարչութեան Պատ.

Ղիկ պիտի մնան, և աչքերը կատաղութեան կրակով լեցուն, կը դարձունէր այն մարդկային որսին վրայ որ իր ձեռքէն կը պոծէր, այն Մուքարրակային, զոր կ'առէր առանց պատճառ գիտնալու. հա՛, որովհետեւ Մուքարրական կենդանի, ինք մեռած էր, Մուքարրական և թէ ճողպրէր, Բէքան իր ձեռքէն յախտեան կը թռէր...

Մուքարրակային շուրջը Գարսիան սպաները մատանջօրէն շարուած էին, մէկ քանիները ծուռկի վրայ վէրքը կը գիտէին, անոնցմէ մին վերարոյժը կանչեց.

—Վերարոյժը... վերարոյժը, Valgame Dios! : Ո՛ւր է Առուապիթեթան. ո՛ւր է, Առուապիթեթան Գարսիան շուկային վերարոյժն էր. ամէն կողմ զայն կը փնտէրին. սպաները անհամբերութեամբ ինքզինքնին կ'ուտէին. Մուքարրական քաղցրութեամբ ժպտելով ձեռքերովը նշան կ'ընէր, հասկցնելու համար. «Սպանե՛ք բարեկամներ, Առուապիթեթան գուցէ քնացած է... այս գիշեր այնչա՛փ գործ ունեցած ըլլալու է ինզճը ո՛ր...»

Յանկարծ յիանալեա մը վազելով սպաներուն մօտեցաւ, զէմքը խիստ սոգոյն և աչքերը արտասուքով լի: Մեռելներուն մէջէն ճանչցած էին Առուապիթեթան, բանակին վերարոյժը, որ գնդակով մը զարնուած, ինկած էր նավարացիի մը գիակին վրայ, զայն զարմանելու զբաղած

Գաղաքական ժողովն, ընդ նախագահութեամբ Գեր. Յախէփ Եպիսկոպոս Այվազեանի, ներկայ տարւոյ Յունուար 1 ի նըստին մէջ վաւերացուցած է Մայր Արքայապետ ընկերութեան կանոնագիրը, և 21 թուահամար պաշտօնական նամակաւ մը վերադարձուցած է իրենց:

Մենք սաչափ գիտենք որ, այս կանոնագիրը ամիսներէ ի վեր Առաջնորդարանի շուրջը կամ մէջը կը դեգերէր. մինչդեռ ուրիշ Հոգատար-Որբախնամ անուն ընկերութիւն մը, որ Մայր Արքայապետէն ընդունալի կուզէր, իր վաւերացումը ստացած էր իր կազմութեան 15-20 օր յառաջ: Է՛հ, ի՛նչ ընենք, երբ Տէր Մամբրէ Իբրև Առաջնորդական ողորմելի Տեղապահ և Նազարէթ իբր Առաջնորդարանի մեխենաշարժ գրագիր, Որբասիրաց ընկերութեան յառաջգիւթիւնը կասեցնելու համար ընկերութիւն կը կազմեն, զարմանալու պատճառ մը չենք ունենար, որ անոնց կանոնագրի վաւերացումն ալ կազմութեան 15-20 օր առաջ տեղի կ'ունենայ: Պեոյ՞ն պաշա պեոյնք քաշ:

ԱՁԴ

Ընկերութեան շահուց համար բացառիկ և վառակար մի քանի եղելութեանց վրայ խորհրդակցելու նպատակով, Դիւանս ստիպողաբար կը խնդրէ Պատ. անդամներէն որ հաճին ներկայ գտնուիլ ամսոյս 29 ին, Երեքշաբթի երեկոյ, ժամը ութին, Լսարան-Ընթերցատան սրահը ի Պազար-Մուրուր, Յամենայն դէպ ժողովը չ'պիտի յետաձգուի: Ներկայ հրաւերը եթէ անխելի մնայ, Դիւանս ինքզինքը զերթ կը յայտարարէ ամեն պատասխանատուութեան:

Ի Դիմաց Մայր-Դրանի
Լսարան-Ընթերցատան Ընկերութեան
Ա. Ատենապետ Ս. Ատենապետ
Կ. Գ. ՈՒՋՈՒՆԵԱՆ Ա. ՊԱՆԵԱՆ



Ակնայ Որբախնամ ընկերութեան տարեկան Ընդհ. Ժողովը պիտի գումարուի

պահուն: Հարկաւ գիշերը պատահած էր այդ դէպքը և անշուշտ մտորուած գնդակով մը, ո՛ն աչք կ'ապարի կտորնէ՛րը, թէ՛ դարմանողները կը մեղցնեն և թէ՛ սպաննողները:

Այն ժամանակ Գարսիաններուն մէջ խոր սպառնութիւն և միանպատակ սարսափ մը տիրեց. Մուքարրակային վէրքը կրնար ծանր ըլլալ և վտանգաւոր ալ էր ու զայն խնամելու համար վերարոյժ չ'կար. մինչև որ մերձակայ բանակէն վերարոյժ մը կանչէին, բանը բանէն անցած կ'ըլլար, որովհետեւ Մուքարրական շատ արեւն կը կորսնցունէր:

Սպաներէն մին շիտակ գերիներուն մօտը գնաց և բարձրաձայն հարցուց.

—Մէջերնիդ վերարոյժ մը կա՞յ:

Կարբիտի զօրքերը իրարու երես նայեցան. ո՛չ, վերարոյժ չ'կար. ամենն ալ զօրք էին:

—Մէջերնիդ մէկը չ'կա՞յ, որ վէրք մը դարմանել պիտնայ:

—Այո՛, պատասխանեց մարդ մը, ե՛ս:

—Յառաջ եկուր. դու՛ն:

Մարդը, վհատած զինորդներու խուճիկները և իւր — անոնցմէ մէկ քանին ալ վերոււորուած էին — և վրուխը բարձր բռնած յառաջ եկաւ: Այս մարդը Արագուիլն էր:

—Դուն գիւնոր չե՛ս, ըսաւ անոր սպան:

—Ո՛չ:
(Շարունակելի) Թարգմ. ԼԵՒԻՆ

յառաջիկայ կիւրակէ 21 Յունուար, կէս օրէն վերջ ժամը ճիշդ 2 ին, Էօղպէքիյէի պարտէզին դիմաց, Պէհէրա Պատին մէջ, օրակարգ ունենալով՝

- 1. մէկ տարւոյ հաշուետուութիւն.
- 2. Ընտրութիւն Մայր-Դիւանի.
- 3. Նոր ընտրութիւն Գործ. Ժողովոյ:

Կը խնդրենք յարգոյ անդամներէն որ հաճին որոշեալ օրը ճիշդ ժամանակին ներկայ գտնուիլ:

Ի դիմաց Ակնայ Որբախնամ Ընկերութեան Գործ. Ժողովոյ

Ատենապետ Վ. Ատենապետ
Ա. ԷՄԻՆԵԱՆ Ա. Ս. ՊՅԱՆԵԱՆ

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՅՈՒՐՏԻՆ ՏՈՒՄՆԵՐԸ

Օտէսայի հիւսիսակողմը երկաթուղոյ կայարանի մը մէջ մէկ քանի օր առաջ սուկալի տուամ մը պատահած է. 1800 հոգի ձիւնէն պաշարուելու են, զիրենք բերող կառախումբը չէ կրցեր իր ճամբան շարունակել: Ճաշարահին ուտելիքները անբողապէս սպառած են. սուկալի կուրսերէ վերջը՝ ամենազօրաւորները վերջին ուտելիքները գրաւած և լափած են:

Երեք օրուան և երեք դիշերուան անուելի շարչարանքներէ յետոյ, կայարանապետը երկու կառախումբ ճամբայ հանել տուած է դէպի Հարաւ: 10 ժամէն այս կառախումբերն ալ չ'կրցին իրենց ճամբան շարունակել և ձիւններուն տակ բոլորովին թաղուեցան: 60 ճամբորդներ դերագոյն ճիգեր ընելով կրցան այդ գերեզմանէն ազատիլ, որուն տակ ցուրտէն և կամ շքնչահեղձութեան անտարակոյս պիտի մեռնէին, գերմարդկային փորձերով կրցան մօտակայ գիւղ մը հասնիլ և անկէց բախիւրներով Օտէսա գառնալ:

Նոյն պահուն, զօրաց գունդ մը, որ Օտէսայէն զրկած էր Շուվալօֆ զօրավարը ձիւնները ճեղքելով մինչև պաշարեալները ճամբայ կը բանար և զանոնք կ'ազատէր, բայց արդէն 120 հոգի ցուրտէ և անօթութեանէ մեռած էին:

ՆԱՄԱԿ ՓԱՐԻՉԷՆ

Փարիզ 14 Յունուար 1901

ՅՐԱՆԱԿԱՆ ՀԱՉԱՐՆՈՅ ԹՂԹՈՂԻՐԱՄԸ. —Վերջին մէկ երկու տարուան մէջ Թրանսսան սկսած է ամէն բան փոխել, սև փոզերը փոխեց և տեղը աւելի կ'ապիտոներ երևան հանեց. յետոյ արծաթէ դրամներուն վրայի նկարը փոխել տուաւ. այս ալ բաւական չեղաւ, ոսկիներն ալ metamorphoseի մէջ դրաւ: Յետոյ տեսաւ որ դեռ կարելի է ուրիշ նոր բան մ'ալ ընել. ուստի Ֆրանսական նամակագրչմները, որ այնքան սիրուն էին և որոնք հաւաքողներու այնքան հաճոյք կը պատճառէին, մըտածեց ուրիշ պատկերներով ներկայացնել և ահա հազիւ թէ մէկ ամիս կայ որ նոր նամակագրչմներ պիտած են գործածուիլ:

